դերում։ Այժմ Զանգեզուրի գյուղերը զարդարված են գեղեցիկ շենքերով, որոնց մեջ կենտրոնական տեղ են գրավում գյուղական դպրոցների լուսավոր շենքերը, գեղեցիկ ակումբները, բաղնիքները ու այլ հասարակական կառուցումները։

Որպես հնի և նորի պայքարի մի պատկեր նշենք, որ սկզբնական շրջանում այդ բնակարաններից շատերը չկարողացան գրավել տեղացիներին՝ ո՛րը քամու առջև ամեն կողմից բաց էր, ո՛րը չուներ ամենատարրական հարմարություններ տնային իրերն ու անասունը պահելու համար, ո՛րը դժվար էր ձմեռը տաքացնել և այլն։ Տեղ-տեղ այդ շենքերը մնացին ամայի, օրինակ՝ Գեղվա ձորում։ Նրանցից շատերի դռներն ու պատուհանները և առհասարակ փայտեղեն մասերը հափշտակվեցին ու մնացին մերկ պատերը։ Այնտեղ, որտեղ նրանց մեջ բնակվեցին, շենքը ենթարկվեց փոփոխության, ավելացնելով մառան կամ պատշգամբ կամ մի կով պահելու համար զետեղարան և այլ մասեր, և այդպիսով բոլորովին անճանաչելի դարձավ սկզբնական ձևավորումը։ Ավելի հաջող կիրառված ձևափոխությամբ կարողացավ նախորդ ժամանակաշրջանում հարմարվել Գորիսի քաղաքային տունը։ Այս նորահաստատ քաղաքում առևտրական ընտանիքները մշակեցին իրենց համար ընդունելի մի ձև, որը, գրեթե, դարձել է ընդհանուր։ Դա ընդարձակ, մեծ մասամբ երկհարկ բնակարան է։ Եթե ստորին հարկը հատկացված չէր լինում ապրանքների պահեստին կամ խանութին, ապա այդտեղ զետեղում էին մթերքներ, փայտ, տնային գործածության իրեր։ Վերին հարկն ունի հայերեն «Ո» տառի ձև, լայն գլխագծով և կարճ ոտներով։ Երկերեսանի տուն. լուսամուտները նայում են դեպի փողոցը։ «Ո»-ի գոգը ուղղված է դեպի բակը, լայն ճակատը՝ դեպի փողոցը։ Փողոցի կողմն են դասավորված մի շարքով երկու-երեք, երբեմն ավելի սենյակներ, ապա այդ շարքի ծայրերին աջ և ձախ կողմից ավելացրած են մի-մի, երբեմն երկու փոքր սենյակներ։ Այդ կողմնակի թևերի և հիմնական սենյակաշարի միջև տարածվող լայն և խորը պատշգամբը դուրս է գալիս դեպի բակը։ Այս պատշգամբն ըստ ամենայնի հիշեցնում է դարադամի սրճարը, որտեղ աջ և ձախ կողմերի պատերը փոխարինված են սենյակներով և ծառայում են նույն նպատակներին։ Սենյակների դռները դուրս են գալիս դեպի պատշգամբ։ Սրճարից ավելի խոր և լայնարձակ այս պատշգամբը ծառայում է ամառը և՛ որպես սեղանատուն, և՛ որպես ննջարան, և՛ որպես հյուրատուն։ Այնտեղ է ընտանիքն անցկացնում տարվա տաք ամիսները։ Խոհանոցին սովորաբար հատկացվում է վերին հարկի կողմնակի թևի սենյակներից մեկը, հակառակ դեպքում՝ ստորին հարկի մի հարմար մասը, որտեղից սանդուխքը բարձրացնում է պատշգամբ։ Սենյակների հատակին հաճախ փռված է լինում գորգ, պատերի տակ ձգված են լինում լայն տախտեր, մութաֆանէրավ և բարձերով զարդարված, պատերին կախված են լինում գորգեր, պատուհաններին՝ վարագույրներ։ Թիթեղե վառարանները շատ տներում փոխարինված են պատի վառարաններով։ Բոլոր տների տանիքները բարձր և թեք են, մեծ մասամբ երկթեք, և ծածկված են կացնով ճղած տափակ տախտակներով[23], որոնք ստացվում են տեղացիներին լավ ծանոթ հին եղանակով՝ գերանը սեպերի օգնությամբ ճղելով անտաշ տախտակների։ Ներկայումս սեպերի փոխարեն դիմում են կացնին[24]։

---

[23] Որ ոտները կոչում են դրան.

[24] Այսպես է Մելիք-Նուբարյանների տիպիկ տունը։